

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՐՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Գիտական կենտրոններում, պրոբլեմային լաբորատորիաներում և ամբիոններում
կատարված գիտահետազոտական աշխատանքների վիճակը և խնդիրները

Արձանագրություն թիվ 10

25.03.2015 թ.

Լսելով և քննարկելով համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների վիճակի վերաբերյալ պրոռեկտոր Դ.Պետրոսյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը նշում է, որ հաշվետու 2014թ. ընթացքում լուրջ հաջողություններ են արձանագրվել ֆինանսավորվող թեմաների կատարման արդյունքում:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման ծավալները 2014 թ. կազմել է 377.07 միլիոն դրամ, որից աշխատավարձի ֆոնդը կազմել է մոտ 85.4 %, որը շատ բարձր ցուցանիշ է: Հետազոտական ծրագրերում ընդգրկված են մեծ թվով երիտասարդներ, ձեռնարկված միջոցառումների արդյունքում ստացվել են նորագույն հետազոտական սարքավորումներ և շուտով կգործարկվի կենսաբանական հետազոտությունների լաբորատորիան, որը հնարավորություն կտա իրականացնել գյուղատնտեսական կենդանիների, մշակաբույսերի և միկրոօրգանիզմների հետ տարվող գենետիկական և գենային ինժեներիայի բնագավառի ցանկացած հետազոտություն: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ամբիոնների նախաձեռնությամբ իրականացվող գիտական թեմաների կատարման ընթացքը բավարար չէ, համալսարանում գիտական աստիճան ունեցող 480 աշխատակիցներից միայն 175-ն է ընդգրկված ֆինանսավորվող գիտական ծրագրերում, դասախոսների որոշ մասը չի զբաղվում գիտությամբ և վերջին 3-4 տարիներին չի տպագրել գիտական հոդված:

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Համալսարանում իրականացված գիտահետազոտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ Դ. Պետրոսյանի հաղորդումն ընդունել է գիտության և գիտահետազոտական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:
2. Հանձնարարել ռեկտոր Ա.Պ.Թարվերդյանին.

- 2.1. Համալսարանի կենսաբանական հետազոտությունների լաբորատորիայի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ձևավորել համապատասխան խումբ՝ տասնօրյա ժամկետում ռեկտորատի քննարկմանը ներկայացնելու լաբորատորիայի տարածքի նորոգման, աշխատակիցների ընտրման և հրամանագրման ծրագիր առաջարկ:
- 2.2. Ձևավորել խումբ՝ մշակելու գիտական կենտրոն մասնաճյուղերի փորձակայաններում, ուսումնափորձնական տնտեսություններում 2015 թ. գյուղատնտեսական աշխատանքներին ուսանողների, մագիստրանտների և համալսարանի աշխատակիցների ներգրավման ծրագիր առաջարկ:
3. Հանձնարարել պրոռեկտոր - գիտության դեպարտամենտի պետ Դ.Պետրոսյանին.
- 3.1 Մշակել և մինչև 2015 թ. դեկտեմբեր ամիսը գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել ագրարային ոլորտի առաջատար գրախոսվող օտարերկրյա և հանրապետական պարբերականներում տպագրվող գիտական հոդվածների ակադեմիական ազնվությունը երաշխավորվող և գրագողությունը կանխարգելող միջոցառումների քաղաքականություն և ընթացակարգ:
- 3.2 Ձեռնարկել միջոցառումներ «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տեղեկագիր» գիտական միջազգային պարբերականը միջազգային հեղինակություն ունեցող գիտական հրատարակումների Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկելու համար:
4. Հանձնարարել պրոռեկտոր Դ.Պետրոսյանին, գիտական ստորաբաժանումների ղեկավարներին և ամբիոնների վարիչներին.
- 4.1. Ակտիվացնել աշխատանքները տարբեր աղբյուրներից ֆինանսավորվող միջազգային և հանրապետական գիտական դրամաշնորհային ծրագրերում գիտական թեմաների հայտեր ներկայացնելու համար:
- 4.2. Ավելացնել ֆինանսավորվող և նախաձեռնողական ծրագրերում ընդգրկված ուսանողների, մագիստրանտների և ասպիրանտների թվաքանակը՝ այն հասցնելով կատարողների 25 %-ի:
- 4.3. Մեկամսյա ժամկետում մշակել և ռեկտորատի հաստատմանը ներկայացնել նորագույն սարքավորումներով կահավորված

ուսումնագիտական լաբորատորիաների ստեղծման ծրագիր առաջարկներ:

5. Հանձնարարել գիտական կենտրոն մասնաճյուղերի և Գ/հ ինստիտուտների տնօրեններին, պրոբլեմային լաբորատորիաների վարիչներին խստորեն պահպանել հաստատված գիտական ծրագրերի օրացուցային պլանների պահանջները և կիսամյակը մեկ անգամ գիտության ղեպարտամենտ ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:
6. Հանձնարարել պրոռեկտոր - գիտության ղեպարտամենտի պետ Դ.Պետրոսյանին և ֆակուլտետների ղեկաններին մեկ ամսյա ժամկետում ֆակուլտետների գիտական խորհուրդներում քննարկել ամբիոններում նախաձեռնողական սկզբունքով կատարվող գիտական թեմաները՝ դրանցում պարտադիր ընդգրկելով բոլոր դասախոսներին:
7. Հանձնարարել պրոռեկտորներ Յու. Մարմարյանին և Ս.Դավեյանին ֆակուլտետների տարեկան հաշվետվությունների ընդունման և քննարկման ժամանակ հաշվի առնել ամբիոնների աշխատակիցների կողմից իրականացվող ֆինանսավորվող և նախաձեռնությամբ կատարվող գիտական թեմաների հաշվետվությունների առկայությունը:
8. Հանձնարարել տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Վ.Սելքոնյանին մշակել և ս.թ. սեպտեմբերից կազմակերպել համալսարանի աշխատակիցների և ասպիրանտների՝ տարբեր պարբերականներում տպագրվող գիտական հրատարակումների հաշվառման, գրանցման ծրագիր:

Գիտ. նախագահ՝

Ա.Պ. Թարվերդյան

Գիտ. քարտուղար՝

Դ.Ս.Բալասանյան